ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՀՈՒՅՆ-ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻՆ՝ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-Ի ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՀՈՒՅՆ-ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻՆ

Եգիպտոս, Ալեքսանդրիա

Այսօր վշտահար սրտով լսեցինք Մոսկվայում անակնկալ մահվան լուրը ձեր Սուրբ Եկեղեցու Պապ և Պատրիարք՝ Նորին Սրբություն Նիկողայոս Զ-ի: Հանգուցյալ Պատրիարքը Հույն-Ուղղափառ Եկեղեցու պայծառ դեմքերից մեկն էր մեր օրերում:

Մենք սրտանց աղոթում ենք նրա բարի հոգու համար և հայցում, որ Տերը քաղցրությամբ ընդունի նրա հոգին երկնից արքայության մեջ:

Ընդունեցեք Մեր եղբայրական խորին ցավակցությունը:

Սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 հուլիսի 1986 թ.